Հայտարարություն

Մրցույթ՝ «ՀՀ Լոռու մարզի Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոց» ՊՈԱԿ-ի ֆիզկուլտուրայի (18 դասաժամ), քիմիայի (12 դասաժամ), աղջիկների տեխնոլոգիայի (4 դասաժամ), տղաների տեխնոլոգիայի (4 դասաժամ), ռուսաց լեզվի (8 դասաժամ), մաթեմատիկայի (10 դասաժամ), ինֆորմատիկայի (5 դասաժամ), դասվարի (20 դասաժամ) ֆիզիկայի (8 դասաժամ), հայ եկեղեցու պատմության (6 դասաժամ), հայրենագիտության (2 դասաժամ) ուսուցչի թափուր տեղերի համար:

Մրցույթն անցկացվում է երկու փուլով՝ թեստավորման եւ հարցազրույցի: Թեստավորման փուլն անցկացվում է՝ ըստ ՀՀ ԿԳՄՍՆ մշակած հարցաշարի: Հարցազրույցի փուլի հարցաշարը կազմում է հաստատությունը և յուրաքանչյուր մասնակցի հետ հարցազրույցն անցկացնում առանձին:
Մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնել՝

-դիմում (Ձև 1),
- մեկ լուսանկար 3x4 չափի,
- բարձրագույն կրթությունը հավաստող փաստաթուղթ (դիպլոմ),
- անձը հաստատող փաստաթուղթ,
- «Հանրակրթության մասին» ՀՀ օրենքի 26-րդ հոդվածի 1-ին մասին համապատասխան՝ աշխատանքային ստաժի վերաբերյալ տեղեկանք աշխատավայրից և աշխատանքային գրքույկի պատճենը (առկայության դեպքում),
- ինքնակենսագրություն (Ձև 5),
- այլ պետությունների քաղաքացիները՝ ՀՀ-ում աշխատելու իրավունքը հավաստող փաստաթուղթ,
- ՀՀ արական սեռի քաղաքացիները՝ նաև զինվորական գրքույկ,
- հրատարակված հոդվածների ցանկ կամ գիտական կոչումը հավաստող փաստաթղթեր (առկայության դեպքում),
- որակավորման տարակարգ ունենալու դեպքում՝ հավաստող փաստաթուղթ:

Տնօրենի կողմից նշանակված պատասխանատու անձը փաստաթղթերի բնօրինակները համեմատում է պատճենների հետ և բնօրինակները վերադարձնում: Եթե ներկայացված փաստաթղթերի ցանկն ամբողջական չէ կամ առկա են թերություններ, մասնակիցը կարող է մինչև փաստաթղթերի ընդունման ժամկետի ավարտը վերացնել և համալրել դրանք:
Փաստաթղթերն ընդունվում են սույն հայտարարության **հրապարակման օրվանից մինչեւ 2022թ. մարտի 4-ը ներառյալ**, ամեն օր՝ ժամը 10:00-ից 15:00-ը, բացի շաբաթ, կիրակի եւ այլ ոչ աշխատանքային օրերից:

Մրցույթը տեղի կունենա **2022թ. մարտի 10-ին՝ ժամը 12:00-ին,** ՀՀ Լոռու մարզի Պրիվոլնոյեի միջնակարգ դպրոցում. հասցեն՝ Լոռու մարզ, գ. Պրիվոլնոյե, 1 փող., շենք 55:

Տեղեկությունների համար զանգահարել (093)66-37-37 հեռախոսահամարով: